

ԸՆԿ. ԺԻՒՆՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ «ԶՎԵՋԴԱ» ԵՎ «ԼԵՆԻՆԳՐԱԴ»
ԱՄՍԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Ընկերներ, կենտրոնի որոշումից պարզ է, որ «Զվեզդա» ամսագրի ամենակույսիտ սխալը իր էջերը Զոշչենկոյի և Ախմատովայի գրական «ստեղծագործության» տրամադրելն է։ Ինչ կարծում եմ, որ հարկ չկա այստեղ քաղվածքներ բերելու Զոշչենկոյի «կապի արկածները» «երկից»։ Ըստ երևույթին, դուք բոլորդ այդ կարդացել եք և ավելի լավ գիտեք, քան ես։ Զոշչենկոյի այդ «երկի» իմաստն այն է, որ նա սովետական մարդկանց պատշեռացնում է որպես անբան և այլանդակ մարդիկ, հիմար և պրիմիտիվ մարդիկ։ Զոշչենկոյին ամենևին չի հետաքրքրում սովետական մարդկանց աշխատանքը, նրանց ջանքերն ու հերոսությունը, նրանց հասարակական ու բարոյական բարձր հատկությունները։ Այդ թեման նրա մոտ միշտ բացակայում է։ Զոշչենկոն որպես քաղքենի և գոհակարար, իրեն համար մշտական թեմա է ընտրել փորձել կենցաղի ամենաստորոգե մանր կողմերը։ Կենցաղի մանրուքների այդ փորձումը պատահական չէ։ Դա յուրահատուկ է բոլոր գոհակար քաղքենիական գրողներին, որոնց շարքին պատկանում է նաև Զոշչենկոն։ Այդ մասին իր ժամանակին շատ է խոսել Բորիս Դուք հիշում եք, թե ինչպես Գորկին սովետական գրողների համագումարում, 1934 թվին, խարանում էր, թող ներվի ասել, «գրականագետներին», որոնք խոհանոցի երախիթի մրից այն կողմ ոչինչ չեն տեսնում։

«Կապի արկածները» Զոշչենկոյի համար նրա սովորական գրոտումների շրջանակից դուրս եկող ինչ-որ բան չէ։ Այդ «երկը» քննադատության տեսադաշտի մեջ ընկավ միայն որպես առավել ցայտուն արտահայտություն այն ամեն բացասականի, որ կա Զոշչենկոյի գրական «ստեղծագործության» մեջ։ Հայտնի է, որ էվակուացիայից Լենինգրադ վերադառնալու ժամանակվանից ի վեր Զոշչենկոն դրել է մի շարք բաներ, որոնք բնորոշ են նրանով, որ նա ընդունակ չէ սովետական մարդկանց կյանքի մեջ գտնելու ոչ մի դրական երևույթ, ոչ մի դրական տիպ։ Այդպես էլ «Կապի արկածներում» Զոշչենկոն վարժվել է ծաղր ու ծանակի ենթարկել սովետական կենցաղը, սովետական կարգերը, սովետական մարդկանց, այդ ծաղր ու ծանակր քողարկելով դատարկ զվարճախոսության և անպետք հումորիստիկայի քողով։

Ի՞նչ դուք ավելի ուշադիր կարդաք ու խորամուխ լինեք «Կապի արկածները» պատմվածքի մեջ, ապա դուք կտեսնեք, որ Զոշչենկոն կապիին օժտում է մեր հասարակական կարգերի բարձրագույն դատավորի դերով և հարկադրում է ինչ-որ բարոյախոսության նման բան կարդալ սովետական մարդկանց։ Կապիկը ներկայացված է ինչ-որ բանական սկիզբ, որն օժտված է մարդկանց վարքագծի գնահատումներ սահմանելու։ Սովետական մարդ-

¹ Լենինգրադի պարտիական ակադեմի ժողովում և գրողների ժողովում ընկ. Ժյանովի աված գեկուցման համառոտ և ամփոփ սղագրությունը։

կանց կյանքը դիտումնավոր կերպով այլանդակ, կարիկատուրային և գոհ՜իկ ձևով պատկերացնելը Զոշչենկոյին անհրաժեշտ էր կապկի շուրթերին նողկալի, թունավորված հակասովետական խրատական ղեկու այն բանի մասին, թե կենդանաբանական այգում ապրելն ավելի լավ է, քան ազատության մեջ, և որ վանդակում ավելի հեշտ է շունչ քաշել, քան սովետական մարդկանց մեջ:

Կարելի է արդյոք բարոյական և քաղաքական անկման ավելի ցածր աստիճանի հասնել, և ի՞նչպես լենինգրադցիները կարող են իրենց ամսագրերի էջերում հանդուրժել նման աղտեղությունը և անպետքությունը:

Ի՞նչ «Զվեզդա» ամսագիրը այդ տեսակ «երկեր» է հրամցնում սովետական ընթերցողներին, ապա որքա՞ն թույլ պետք է լինեն «Զվեզդա» ամսագիրը դեկավարող լենինգրադցիների զգաստությունը, որ կարելի լինեն նրա մեջ զետեղել սովետական հասարակարգի նկատմամբ անասնական թշնամության թույնով թունավորված երկեր: Միայն գրականության տականքները կարող են ստեղծել նման «երկեր» և միայն կույր ու ապուլիտիկ մարդիկ կարող են ընթացք տալ դրանց:

Ասում են, թե Զոշչենկոյի պատմվածքը կարդացվել է լենինգրագի Լստրադաներում: Որքա՞ն պետք է լենինգրադում թուլացած լինեն իդեոլոգիական աշխատանքի դեկավարությունը, որպեսզի նման փաստերը կարողանային տեղի ունենալ:

Զոշչենկոյին, իր նողկալի բարոյախոսություններ, հաջողվել է ներթափանցել լենինգրագյան մեծ ամսագրի էջերը և այնտեղ տեղավորվել ամենայն համարությամբ: Իսկ չէ՞ որ «Զվեզդա» ամսագիրը մի օրդան է, որը պետք է դաստիարակի մեր երիտասարդությանը: Բայց կարո՞ղ է արդյոք այդ խնդիրը կատարել այն ամսագիրը, որը իր մոտ ապաստան է տվել այնպիսի դոհակարարի և ոչ-սովետական գրողի, ինչպիսին Զոշչենկոն է: Մի՞թե «Զվեզդա» խմբագրությանը ծանոթ չէ Զոշչենկոյի դեմքը:

Զէ՞ որ դեռ բուրժուական վերջերս, 1944 թվի սկզբին, «Բուլշևիկ» ամսաստիճան խիստ քննադատության ենթարկվեց Զոշչենկոյի «Արևի ծագումից առաջ» գայրացուցիչ վիպակը, որը գրված էր գերմանական զավթիչների դեմ սովետական ժողովրդի կողմից՝ մղվող ազատագրական պատերազմի ընթացքում: Այդ վիպակում Զոշչենկոն ամբողջությամբ դրսևորում է իր ստոր ու՝ զազրեչի հոգին՝ այդ բանը անելով բավականությամբ, բերանը չփչփացնելով, ցանկություն ունենալով ցույց տալ բուրժուին, թե, տեսե՛ք, ինչպիսի՞ խուլիգան եմ ես:

Դժվար է մեր գրականության մեջ գտնել որևէ ավելի զգվելի բան, քան այն «բարոյախոսությունը», որ Զոշչենկոն քարոզում է «Արևի ծագումից առաջ» վիպակում, մարդկանց և հենց իրեն պատկերացնելով որպես ստոր, կեղտոտ գազաններ, որոնք շունեն ո՛չ ամոթ և ո՛չ խիղճ: Եվ այդ բարոյախոսությունը նա սովետական մարդկանց հրամցնում էր այն ժամանակ, երբ սեր ժողովուրդը արյուն էր թափում լլսված ծանր պատերազմում, երբ սովետական պետության կյանքը մազից էր կախված, երբ սովետական ժողովուրդը անթիվ-անհամար զոհեր էր տալիս հանուն հաղթանակի բնդդեմ գերմանացիներին: Իսկ Զոշչենկոն, խրամատվելով Ալմա-Աթայում, խոր թիկունքում, այդ ժամանակ սովետական ժողովրդին ոչնչով չօգնեց գերմանական զավթիչների դեմ նրա մղած պայքարում: «Բուլշևիկ» մեջ Զոշչենկոն միանգամայն

իրավացիորեն հրապարակայնորեն գանակոծվեց, որպես սովետական գրականությանը խորթ ծանակագրող և գեոհկարար: Նա այն ժամանակ թրում էր հասարակական կարծիքի վրա: Եվ ահա դեռ երկու տարի չի անցել, դեռ չի շորացել այն թանաքը, որով զրված էր «Բուլշևիկի» գրախոսականը, որ միևնույն Ձոշենկոն հաղթականորեն մուտք է գործում լենինգրադ և սկսում է ազատ զրոսնել լենինգրագի ամսագրերի էջերում: Նրան սիրով տպագրում է ոչ միայն «Ջվեղդան», այլև «Լենինգրադ» ամսագիրը: Նրան սիրով և պատրաստակամությամբ տրամադրում են թատերական լսարանները: Ավելին. նրան հնարավորություն են տալիս ղեկավար դիրք գրավելու Գրողների Միության լենինգրագի բաժանմունքում և ակտիվ դեր խաղալու լենինգրագի քրական գործերում: Ի՞նչ հիման վրա դուք Ձոշենկոյին թույլ եք տալիս զրոսնելու լենինգրագի գրականության այգիներում ու պարտեզներում: Ինչո՞ւ լենինգրագի պարտիական ակտիվը, նրա գրողների կազմակերպությունը թույլ են տվել այդ խայտառակ փաստերը:

Ձոշենկոյի ամբողջովին փտած և ապականված հասարակական-քաղաքական ու գրական դեմքը ձևավորվել է ոչ ամենավերջին ժամանակներս: Նրա ժամանակակից «երկերը» ամենևին էլ պատահականություն չեն: Դրանք հանդիսանում են միայն Ձոշենկոյի այն ամբողջ գրական «ժառանգության»: շարունակությունը, որն սկիզբ է առնում 20-ական թվականներից:

Ո՞վ է եղել Ձոշենկոն անցյալում: Նա հանդիսացել է այսպես կոչված «սերապիոնյան եղբայրներ» գրական խմբի կազմակերպիչներից մեկը: Ի՞նչ է եղել Ձոշենկոյի հասարակական-քաղաքական դեմքը «Սերապիոնյան եղբայրների» կազմակերպման շրջանում: Թույլ տվեք դիմելու «Լիտերատուրնիե զապիսկի» ամսագրի 1922 թվի 3-րդ համարին, որտեղ այդ խմբի հիմնադիրները շարադրում էին իրենց հավատամքը: Այլ հայտնությունների թվում այնտեղ գետնոված է Ձոշենկոյի «Հավատի խորհրդանիշը» մի ճղճիմ հոդվածում, որը կոչվում է «Իմ մասին և դեսից-դեսից»: Ձոշենկոն ոչ ոքից և ոչ մի բանից չի քաշվում, հրապարակայնորեն մերկանում է, միանգամայն բացահայտ կերպով արտահայտում է իր քաղաքական, գրական «հայացքները»: Լսեցեք, թե ինչ էր նա ասում այնտեղ.

«ԼՆԿ հանրապետ գրող լինելը շատ դժվար բան է: Ասենք, նույն այդ իդեոլոգիան... այժմ դրոգից պահանջվում է իդեոլոգիա... Ինձ համար հիրավի այնպես անդուրեկան բան»...

«Իմ մոտ, ասացեք, ի՞նչ «ճիշտ իդեոլոգիա» կարող է լինել, եթե ոչ մի պարտիա ամբողջովին վերցրած ինձ չի գրավում»:

«Պարտիական մարդկանց տեսակետից ես անսկզբունք մարդ եմ: Թող այդպես լինի: Ես ինքս իմ մասին կասեմ: Ես կոմունիստ չեմ, էսեր չեմ, միապետական չեմ, այլ պարզապես ուս եմ և ընդ որում քաղաքականապես անբարոյական»...

«Ազնիվ խոսք եմ տալիս, որ մինչև այժմ չգիտեմ, թեկուզ ասենք Դուշկովը... ո՞ր պարտիային է պատկանում Դուշկովը, սատանան նրան գիտի, թե ո՞ր պարտիայի մեջ է... գիտեմ, որ բուլշևիկ չէ, բայց թե Լսեր է կամ թե կադետ, չգիտեմ և չեմ ուզում իմանալ» և այլն և այլն: Ի՞նչ կասեք, բնիկներ, այսպիսի «իդեոլոգիայի» մասին: Այդ ժամանակվանից անցել է 25 տարի, երբ Ձոշենկոն տպագրել էր իր այդ «խոստովանանքը»: Փոխվե՞լ է արդյոք նա այդ ժամանակվանից ի վեր: Զի երևում, Երկու և կես տասնա-

մյակի ընթացքում նա ոչ միայն ոչինչ չսովորեց և ոչ միայն ամենևին չփոխվեց, այլ, ընդհակառակը, ցինիկ բացահայտությամբ շարունակում է մնալ դադափարսզրկության և զոհակության քարոզիչ, անսկզբունքային և անաշխատի գրական խուլիգան։ Այդ նշանակում է, որ Զոչչենկոյին ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ դուր չեն գալիս սովետական կարգերը, Ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ, նա խորթ է ու թշնամի սովետական դրականությանը։ Ի՞նչ է այդ բոլորով հանգերձ Զոչչենկոյն լենինգրադում դառնել և դուր չլանության համարյա թե սյուն, եթե նրան վեր էին բարձրացնում լենինգրադի պառնասում, ապա մնում է միայն զարմանալ, թե անսկզբունքայնության, անպահանջկոտության, անխստապահանջության, անտարբերության ինչ աստիճանի կարող էին հասնել Զոչչենկոյին ճանապարհ հարթող և նրան ներքոզներով փառաբանող մարդիկ։

Թույլ տվեք ևս մեկ նմուշ բերել այսպես կոչված «Սերապիոնյան եղբայրների» դեմքի մասին։ Այդ նույն «Լիտերատուրնիև զապիսկի» 1922 թվի երրորդ համարում մի ուրիշ սերապիոնական՝ Լև Լուսցր նույնպես փորձում է զադափարական հիմնավորում տալ այն վնասակար և սովետական գրականությանը խորթ ուղղությանը, որ ներկայացնում էր «Սերապիոնյան եղբայրներ» խումբը։ Լուսցր գրում է.

«Մենք հավաքվել ենք ուղուցիտն օրերին, քաղաքական հուժկու լարման օրերին։ Ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է», — ասում էին մեզ աջից ու ձախից, — ում հետ եք դուք, սերապիոնյան եղբայրներ, կոմունիստներ»։ Հետո, թե կոմունիստների դեմ, ուղուցիտայի հետ, թե ուղուցիտայի դեմ։

«Ո՞ւմ հետ ենք մենք, սերապիոնյան եղբայրներս։ Մենք Սերապիոն անվորի հետ ենք»...

Հասարակայնությունը շատ երկար ու տանջալից է տիրել ուս գրականությանը... մենք չենք ուզում ուտիլիտարիզմ։ Մենք գրում ենք ոչ պրոպագանդայի համար։ Արվեստը իրական է, ինչպես ինքը կյանքը և կյանքի նման նա աննպատակ է ու անիմաստ, գոյություն ունի նրա համար, որ չի կարող գոյություն չունենալ։

Այս է այն դերը, որ «Սերապիոնյան եղբայրները» հատկացնում են արվեստին, խելով նրանից զադափարականությունը, հասարակական նշանակությունը, հոշակելով արվեստի զադափարազրկություն, արվեստ հանուն արվեստի, արվեստ առանց նպատակի ու իմաստի։ Հենց դա էլ փտած ապուլիտիզմի, քաղքենիության և զոհակության քարոզ է։

Ի՞նչ հետևություն պետք է անել սրանից։ Եթե Զոչչենկոյին դուր չեն գալիս սովետական կարգերը, ի՞նչ եք հրամայում, հարմարվել Զոչչենկոյին։ Մենք չէ, որ պետք է հարմարվենք ճաշակներին։ Մենք չէ, որ պետք է մեր կենցաղը և մեր հասարակակարգը վերակառուցենք ըստ Զոչչենկոյի։ Ի՞նչ նա վերակառուցվի, իսկ եթե չի ուզում վերակառուցվել, թող կորչի սովետական գրականությունից։ Սովետական գրականության մեջ չի կարող տեղ լինել փտած, դատարկ, անզադափարական և զոհակ երկիրին։ (Բուռն ծափահարություններ)։

Ահա թե ինչից է ելնում Կենտկոմը — որոշում կայացնելով «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին։

Անցնում եմ Աննա Ախմատովայի դրական «ստեղծագործության» հարցին։ Նրա երկերը վերջին ժամանակներս լենինգրադի ամսագրերում երևում

են զրնդլայնված վերարտադրության» կարգով: Պա նույնպես զարմանալի և հակաբնական է, ինչպես եթե որեէ մեկը այժմ սկսեր վերահրատարակել Մերեժկովսկու, Վյաչեսլավ Իվանովի, Միխայիլ Կուզմինի, Անդրեյ Բելիի, Զինաիդա Դիպպիուսի, Ֆեոդոր Սոլոգուբի, Զինովևա-Աննիբայի և այլոց, այսինքն բոլոր նրանց երկերը, որոնց մեր առաջավոր հասարակայնությունը և գրականությունը միշտ էլ համարել է քաղաքականության ու արվեստի մեջ ռեակցիոն խավարամոլության ու ռենեգատության ներկայացուցիչներ:

Ի որևի՜ն իր ժամանակին ասում էր, որ 1907—1917 թ. թ. տասնամյակը ամենախայտառակ և ամենաանշնորհ տասնամյակի անվան է արժանի ուս ինտելիգենցիայի պատմության մեջ, երբ 1905 թվի ռեվոլուցիայից հետո ինտելիգենցիայի զգալի մասը հեռացավ ռեվոլուցիայից, զլորվեց ռեակցիոն միստիկայի ու պոռնոգրաֆիայի ճահճը, գաղափարագրկությունը հռչակեց իր գրոշը, իր ռենեգատությունը քողարկելով «գեղեցիկ» ֆրազայով: յՍվ ես այրեցի այն բոլորը, ինչին երկրպագում էի, երկրպագեցի նրան, ինչ այրում էի: Հենց այդ տասնամյակում երևան եկան այնպիսի ռենեգատական երգեր, ինչպես Ռոպչինի «Դժգույն նժույգը», Վիննիչենկոյի և ռեվոլուցիայի բանակից ռեակցիայի բանակը դասալքած մյուսների երկերը, դասալիքներ, որոնք շտապում էին պսակադերժ անել այն բարձր գաղափարները, որոնց համադ պայքարում էր ուսական հասարակության լավագույն առաջավոր մասը: Լույս աշխարհ դուրս եկան ժողովրդից հրաժարված, «արվեստ հանուն» արվեստի» թեզը հռչակած, գրականության մեջ գաղափարագրկություն բարոգող, իրենց գաղափարական և բարոյական ապականությունը անբովանդակ գեղեցիկ ձևով քողարկող ամեն գույնի սիմվոլիստներ, իմաժինիստներ, դեկադենտներ: Նրանց բոլորին միացնում էր գալիք պրոլետարական ոսոսուցիայի առաջ ունեցած անասնական երկյուղը: Բավական է հիշեցնել, որ այդ գրական ռեակցիոն հոսանքների խոշորագույն «գաղափարախոսներից» մեկը Մերեժկովսկին էր, որը գալիք պրոլետարական ռեվոլուցիան անվանում էր «գալիք գոհակություն» և Հոկտեմբերյան ռեվոլուցիան դիմավորեց անասնական կատաղությամբ:

Աննա Ախմատովան հանդիսանում է այդ գաղափարագուրկ, ռեակցիոն գրական ճահճի ներկայացուցիչներից մեկը: Նա պատկանում է այսպես կոչված ակմեիստների գրական խմբին, որոնք իրենց ժամանակին դուրս էին եկել սիմվոլիստների շարքերից, և հանդիսանում է սովետական գրականությանը բացարձակապես խորթ արիստոկրատական-սալոնային դատարկ, գաղափարագուրկ պոեզիայի դրոշակակիրներից մեկը: Ակմեիստները ծայրահեղ անհատապաշտական ուղղություն էին արվեստի մեջ: Նրանք բարոգում էին «արվեստ արվեստի համար», «գեղեցկություն հանուն բուն գեղեցկության» տեսությունը, ոչինչ չէին ուզում իմանալ ժողովրդի մասին, նրա կարիքների ու շահերի, նրա հասարակական կյանքի մասին:

Իր սոցիալական ակունքներով դա ազնվականական-բուրժուական հոսանք էր գրականության մեջ այն ժամանակաշրջանում, երբ արիստոկրատիայի և բուրժուազիայի օրերը հաշվված էին և երբ տիրապետող դասակարգերի բանաստեղծներն ու գաղափարախոսները ձգտում էին անդուրեկան խրականությունից թաքնվել եթերային բարձունքներում և կրոնական միստիկայի մշուշի մեջ, անձնական շնչին ապրումների և իրենց ճղճիմ հոգին փորփորելու մեջ: Ակմեիստները, ինչպես և սիմվոլիստները, դեկադենտները և ազ-

ներվական-բուրժուական քայքայվող գաղափարախոսության մյուս ներկայացուցիչները անկումայնության, հոռետեսության, անդրաշխարհյան հավատի քարոզիչներ էին:

Ախմատովայի թեմատիկան ամբողջովին անհատապաշտական է: Ողորմելիության չափ սահմանափակ է նրա պոեզիայի դիապազոնը, գեղասենյակի և աղոթատան միջև դեռ ու դեռ ընկնող գազազած տիրուհու պոեզիայի դիապազոնը: Հիմնականը նրա մոտ սիրային-էրոտիկ մոտիվներ են, միահյուսված տխրության, կարոտի, մահվան, միստիկայի, դատապարտվածության մոտիվների հետ: Դատապարտվածության զգացումը, — մահացող խմբի հասարակական գիտակցության համար հասկանալի այդ զգացումը, — հոգեվարքային հուսալքության մոռյոլ գույներ, միստիկական ապրումներ, էրոտիկայի հետ միասին — այդպես է Ախմատովայի, անդառնալիորեն հավիտենականության գիրկն առնած հին ազնվականական կուլտուրայի աշխարհի, «եկատերինյան հին լավ ժամանակների» բեկորներից մեկի հոգևոր աշխարհը: Ոչ միանձնուհի, ոչ անառակ կին, այլ ավելի ճիշտ՝ անառակ կին և միանձնուհի, որի մոտ անառակությունը միախառնված է աղոթքի հետ:

Եայց երդվում եմ քեզ հրեշտակային պարտեզով,

Հրաշագործ սրբապատկերով Լմ երդվում

Իմ բոցավառ արբեցումի մեր գիշերներով:

(Ախմատովա «Anno Domini»)

Այսպես է Ախմատովան իր փոքրիկ, նեղ, անձնական կյանքով, շնչեն ապրումներով և կրոնական-միստիկական էրոտիկայով:

Ախմատովայի պոեզիան միանգամայն հեռու է ժողովրդից: Դա հին ազնվականական Ռուսաստանի տաս հազար վերնախավայինների պոեզիան է, որոնց արդեն ոչինչ չէր մնացել, բացի հառաչելուց «հին լավ ժամանակների» համար: Եկատերինյան ժամանակների կալվածատիրական ազարակները դարավոր լորենիների ծառուղիներով, շատրվաններով, արձաններով ու քարե կամարներով, ջերմոցներով, սիրահարների զրուցարաններով և զառսմած ուռենիներով՝ դարպասների վրա, ազնվականական Պետերբուրգ, Օարսկոյե Սելո, Պավլովսկի կայարան և ազնվականական կուլտուրայի այլ նշխարներ: Այս բոլորը անվերադարձ անցյալի գիրկն է անցել: Այդ հեռավոր, ժողովրդին խորթ կուլտուրայի բեկորներին, որոնք ինչ-որ հրաշքով պահպանվել են մինչև մեր ժամանակները, արդեն այլևս ոչինչ չի մնում անել, բան միայն ներփակվել իրենց մեջ և ապրել ցնորքներով: «Ամեն ինչ հափշտակված է, մատնված, վաճառված» — այսպես է գրում Ախմատովան:

Ակմեխտների հասարակական-քաղաքական և գրական իդեալների մասին այդ խմբի նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Օսիպ Մանդելշտամը ունի ուղիղալից ոչ շատ առաջ գրում էր. «Օրգանիզմի և կազմակերպության նկատմամբ սերը ակմեխտները բաժանում են ֆիզիոլոգիական հանճարեղ միջնադարի հետ»... «Միջնադարը յուրատեսակ որոշելով մարդու տեսակարար կշիռը, զգում և այն յուրաքանչյուրի համար ընդունում էր միանգամայն փնկախ նրա ծառայություններից»... «Այո՛, Եվրոպան անցել է նորաթափանց կուլտուրայի լաբիրինթոսներով, երբ վերացական կեցությունը, ոչնչով չդունազարդված անհատական գոյությունը գնահատվում էր որպես սխրագոր-

ծություն։ Այստեղից էլ բխում է բոլոր մարդկանց կապող արխատոկրատական մտերմությունը, որը ողով այնքան խորթ է մեծ ունուցիայի «հավասարության» և «հրաշքության»... «Միջնադարը մեզ համար թանկ է նրա համար, որ ունեւր մեծ շափով սահմանազատման և միջնորմի զգացումը... «Դատողականության» և միստիկայի ազնիվ խառնուրդ ու աշխարհի զգացողությունը որպէս կենդանի հավասարակշռութիւն մեզ հավասարեցնում է դարաշրջանի հետ և դրդում ուժեւր քաղել ուժանակաւ հողի վրա մոտ 1200 բնականին ծագած երկերից»...

Մանդելշտամի այս արտահայտութիւնների մեջ ծավալված են ակամ-խստների իդէներ ու իդեալները։ «Իտ դեպի միջնադար», այսպէս է այդ արխատոկրատական-սալոնային խմբի հասարակական իդեալը։ Իտ դեպի կուպիկը, — արձապանքում է նրա հետ Ձողչենկոն։ Ի դեպ պետք է ասել՝ թե՛ ակամխստները և թե՛ «Սերապիոնյան եղբայրները» իրենց ծագումը սկսում են ընդհանուր նախահայրերից։ Թե՛ ակամխստների և թե՛ «Սերապիոնյան եղբայրների» ընդհանուր նախահայրը Հոֆմանն է, արխատոկրատական-սալոնային դեկադենտութիւն և միստիցիզմի հիմնադիրներից մեկը։

Ինչո՞ւ հանկարծ հարկ եղավ ժողովրդականացնել Ախմատովայի սյուն-գիւղի։ Ի՞նչ կապ ունի նա մեզ, սովետական մարդկանց հետ։ Ինչո՞ւ պետք էր գրական տրիբունա տրամադրել այդ բոլոր անկումային և մեզ խորապէս խորթ գրական ուղղութիւններին։

Ռուս գրականութիւն պատմութիւնից մենք գիտենք, որ ոչ մեկ և ոչ էլ երկու անգամ գրական ոեակցիոն հոսանքները, որոնց պատկանում են Եւսիմփուլիստները, և՛ ակամխստները, փորձել են արշավանք սկսել ռուս գրականութիւն ունուցիոն-դեմոկրատական մեծ տրագիգիաների դեմ, նրա առաջավոր ներկայացուցիչների դեմ, փորձել են գրականութիւնը զրկել նրա բարձր, գաղափարական և հասարակական նշանակութիւնից, զլորել գաղափարազրկութիւն և գոհակութիւն ճահիճը։ Այդ բոլոր «մոդայական» հոսանքները մոռացութիւն են մատնվել և անցյալի գիրկն են նետվել այն դասակարգների հետ միասին, որոնց գաղափարախոսութիւնը նրանք արտայայտում էին։ Այդ բոլոր սիմփուլիստները, ակամխստները, «դեղին բաճկոնները», «բուրնային վալետները», «նիշկոնները», — ի՞նչ է նրանցից մնացել մեր մայրենի ռուսական սովետական գրականութիւն մեջ։ Իհրանգամայն ոչինչ։ Թեւ ռուսական ունուցիոն դեմոկրատական գրականութիւն մեծ ներկայացուցիչների՝ Բելինսկու, Դորրոյուրովի, Չերնիշևսկու, Գերցենի, Սալտիկով-Շչեդրինի դեմ նրանց արշավանքները կազմակերպվում էին մեծ աղմուկով և հավակնութիւնամբ, բայց տապալվում էին նույնպիսի էֆեկտով։

Ակամխստները հուշակում էին «ոչ մի ուղղում չմտցնել կեցութիւն մեջ և դրա քննադատութիւնը ձեռնամուխ չլինել»։ Ինչո՞ւ նրանք դեմ էին կեցութիւն մեջ որևէ ուղղում մտցնելուն։ Նրա համար, որ այդ հին ազնվականական, բուրժուական կեցութիւնը նրանց դուր էր գալիս, իսկ ունուցիոն ժողովուրդը պատրաստվում էր անհանգստացնել նրանց այդ կեցութիւնը։ 1917 թվի Հոկտեմբերին պատմութիւն աղբանոցը նետվեցին ինչպէս իշխող դասակարգերը, այնպէս էլ նրանց գաղափարախոսներն ու գովերգողները։

Իվ հանկարծ սոցիալիստական ունուցիայի 29-րդ տարում նորից ուրվականների աշխարհից բեմ են դուրս գալիս մի քանի թանգարանային նմուշ-

ներ և սկսում են մեր երիտասարդությունը սովորեցնել, թե ինչպես պետք է ապրել: Ախմատովայի առաջ լայնորեն բաց են անում Հենինգրադի ամսագրի դարպասները և նրան ազատ կերպով թույլ են տալիս երիտասարդության գիտակցությունը թունավորել իր պոեզիայի նեխած ոգով:

«Հենինգրադ» ամսագրի համարներից մեկում հրապարակված է 1909 թվից մինչև 1944 թվի շրջանում գրված Ախմատովայի երկերի ամփոփագրի նման մի բան: Այնտեղ այլ խլամի հետ միասին կա մի բանաստեղծություն, որը գրված է էվակուացիայի ժամանակ՝ Հայրենական Մեծ պատերազմի օրերին: Այդ բանաստեղծության մեջ նա գրում է իր մենակության մասին, որ նա հարկադրված է բաժանել սև կատվի հետ: Սև կատուն նրա վրա է նայում որպես հարյուրամյակի աչք: Թեման նոր չէ: Սև կատվի մասին Ախմատովան գրել է նաև 1909 թվին: Սովետական գրականությանը խորթ մենակության և անելանելիության տրամադրությունները շաղկապում են Ախմատովայի ստեղծագործությանն ամբողջ պատմական ուղին:

Ի՞նչ ընդհանուր բան կա այդ պոեզիայի և մեր ժողովրդի ու պետության շահերի միջև: Միանգամայն ոչինչ: Ախմատովայի ստեղծագործությունը հեռավոր անցյալի գործ է. դա խորթ է ժամանակակից սովետական իրականությանը և չի կարող հանդուրժվել մեր ամսագրերի էջերում: Մեր գրականությունը մասնավոր ձեռնարկություն չէ, որը նկատի ունենա հաճոյացնելու գրական շուկայի տարրեր ճաշակներին: Մենք ամենևին էլ տրամադիր չենք մեր գրականության մեջ տեղ տալ այնպիսի ճաշակների ու բարբերի, որոնք ընդհանուր ոչինչ չունեն սովետական մարդկանց բարոյականության և հատկությունների հետ: Ի՞նչ ուսանելի բան կարող են տալ մեր երիտասարդությանը Ախմատովայի երկերը: Վնասից բացի ոչ մի բան: Այդ երկերը կարող են միայն սերմանել վհատություն, ոգու անկում, հոռետեսություն, հասարակական կյանքի հրատապ հարցերից հեռանալու ձգտում, հասարակական կյանքի և գործունեության լայն ճանապարհից դեպի անձնական ապրումների նեղիկ աշխարհ՝ հեռանալու ձգտում: Ի՞նչպես կարելի է նրա ձեռքը տալ մեր երիտասարդության դաստիարակությունը: Մինչդեռ Ախմատովայի երկերը մեծ պատրաստակամությամբ տպագրում էին թե՛ «Զվեզդան» և թե՛ «Հենինգրադը» և դեռևս լույս են րնծայվում առանձին ժողովուրդներին:

Նկատի ունենալով այս բոլորը, պատահական չէ, որ Հենինգրադի ամսագրերում սկսում են երևան գալ ուրիշ գրողների երկեր, որոնք սկսել են սայթաքել դեպի գաղափարազրկության և անկումայնության դիրքերը: Լուսկատի ունեմ այնպիսի երկեր, ինչպես Սադոֆևի և Կոմիսարովայի հրկերը: Սադոֆևը և Կոմիսարովան իրենց մի քանի բանաստեղծությունների մեջ սկսել են կրկնել Ախմատովային, սկսել են տարածել վհատության, կարոտի և մենություն տրամադրություններ, որոնք այնպես դրավիչ են Ախմատովայի ոգով:

Խոսք չկա ասելու, որ նման տրամադրությունները կամ նման տրամադրությունների քարոզը կարող է միայն բացասական ազդեցություն գործել մեր երիտասարդության վրա, կարող է նրա գիտակցությունը թունավորել գաղափարազրկության, ապուլիտիկության, վհատության նեխած ոգով:

Իսկ ի՞նչ կլինեն, եթե մենք երիտասարդությանը դաստիարակենք վհատության և մեր գործի նկատմամբ թերահավատության ոգով: Այն կլինեն, որ

մենք չէինք հաղթի Հայրենական Մեծ պատերազմում: Հենց նրա համար, որ սովետական պետությունը և մեր պարտիան սովետական գրականության միջոցով մեր երիտասարդությանը դաստիարակել են առույգության, իր ուժերի նկատմամբ վստահության ոգով, հենց դրա համար էլ մենք հաղթահարեցինք սոցիալիզմի շինարարության մեծագույն դժվարությունները և հաղթանակի հասանք գերմանացիների ու ճապոնացիների դեմ:

Ի՞նչ է հետևում այս բոլորից: Սրանից հետևում է, որ լավ, գաղափարական, առույգ երկերի կողքին իր էջերում գաղափարագուրկ, գոնհիկ, ունակցիոն երկեր զետեղած «Զվեզդա» ամսագիրը դարձել է ուղղություն չունեցող ամսագիր, դարձել է մի ամսագիր, որը մեր թշնամիներին օգնում է քայքայելու մեր երիտասարդությանը: Իսկ մեր ամսագրերը միշտ ուժեղ են եղել իրենց առույգ, ուղղուցիոն ուղղությամբ և ոչ թե էկլեկտիկայով, գաղափարազրկությամբ և ապուխտիկությամբ: Գաղափարազրկության պրոպագանդան իրավահավասարություն է ստացել «Զվեզդայում»: Ավելին, պարզվում է, որ Զոշչենկոն այնպիսի ուժ էր ձեռք բերել լենինգրադի գրողների կազմակերպության մեջ, որ նույնիսկ քղափում էր չհամաձայնողների վրա, քննադատներին սպառնում էր նրանց մասին գրել հերթական երկերից մեկում: Նա դարձել էր ինչ-որ գրական դիկտատորի նման մի բան: Նրան շքանշան տրվում էր երկրպագուների մի խումբ, փառք ստեղծելով նրա համար:

Հարց է ծագում՝ ի՞նչ հիմունքով Ինչո՞ւ դուք թույլ տվիր այդ հակաբնական և ռեակցիոն գործը:

Պատահական չէ, որ լենինգրադի գրական ամսագրերում սկսել են տարվել Արևմուտքի ժամանակակից բուրժուական ցածրորակ գրականությունը: Մեր մի քանի գրողներ սկսել են իրենց դիտել ոչ թե որպես ուսուցիչներ, այլ բուրժուական-քաղթենիական գրողների աշակերտներ, սկսել են բռնել արտասահմանյան քաղթենիական գրականության առաջ ստորաքարշություն անելու և երկրպագելու ուղին: Արդյոք գա վայել է մեզ, սովետական գրողներին, վայել է արդյոք այդպիսի ստորաքարշությունը մեզ, որ կառուցել ենք սովետական հասարակարգ, որը հարյուր անգամ ավելի բարձր ու լավ է բուրժուական ամեն մի իրավակարգից: Աշխարհում ամենաուղիղիոն գրականությունը հանդիսացող մեր սովետական առաջավոր գրականությունը վայել է արդյոք ստորաքարշությունը Արևմուտքի քաղթենիական-բուրժուական սահմանափակ գրականության առաջ:

Մեր գրողների աշխատանքի խոշոր թերությունը հանդիսանում է նաև հեռացումը ժամանակակից սովետական թեմատիկայից, պատմական թեմատիկայով միակողմանիորեն տարվելը մի կողմից, իսկ մյուս կողմից դատարկ, զուտ զվարճացնող սյուժեներով զբաղվելու փորձը: Որոշ գրողներ արդարացի են համար իրենց ետ մնալը սովետական ժամանակակից մեծ թեմաներից, ասում են, թե հասել է ժամանակը, երբ ժողովրդին պետք է տալ դատարկ զվարճացնող գրականություն, երբ երկի գաղափարականությունը կարելի է հաշիվ չառնել: Դա խորապես սխալ պատկերացում է մեր ժողովրդի, նրա պահանջմունքների, շահերի մասին: Մեր ժողովուրդը սպասում է, որ սովետական գրողները իմաստավորեն և ընդհանրացնեն այն վիժիտների փորձը, որ ժողովուրդը ձեռք է բերել Հայրենական Մեծ պատերազմում, որ նրանք պատկերեն և ընդհանրացնեն այն հերոսությունը, որով ժո-

ղովուրդն այժմ, թշնամիներին վտարելուց հետո աշխատում է երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման համար:

Մի քանի խոսք «Լենինգրադ» ամսագրի մասին: Այստեղ Ջոշենկոյի գիրքը է՛լ ավելի «ամուր» է, քան «Զվեզդայում», ինչպես և Ախմատովային: Ջոշենկոն և Ախմատովան գրական ակտիվ ուժ էին դարձել երկու ամսագրերում: «Լենինգրադ» ամսագիրն այսպիսով պատասխանատվություն է կրում, որ նա իր էջերը տրամադրել էր այնպիսի գեղեցկարարների, ինչպես Ջոշենկոն, և այնպիսի սալոնային բանաստեղծուհիների, ինչպիսին Ախմատովան է:

Սակայն «Լենինգրադ» ամսագիրն ունի նաև այլ սխալներ:

Ահա, օրինակ, «Իվգենի Օնեգինի» պարոդիան, որ գրել է ոմն Խայչին: Այդ բանը կոչվում է «Օնեգինի վերագարձը»: Ասում են, որ այն հաճախ կատարվում է Լենինգրադի էստրադային բեմերում: Անհասկանալի է, թե ինչու Լենինգրադցիները թույլ են տալիս, որպեսզի հրապարակային տրիբունայից կշտամբեն Լենինգրադին, ինչպես այդ անում է Խայչին: Չէ՞ որ այդ ամբողջ այսպես կոչված գրական «պարոդիայի» իմաստը ժամանակակից Լենինգրադում լույս ընկած Օնեգինի հետ պատահած արկածների առթիվ դատարկ սրախոսություն չէ: Խայչին հորինած պասկվիլի իմաստն այն է, որ նա փորձում է մեր ժամանակակից Լենինգրադը համեմատել պուշկինյան դարաշրջանի Պետերբուրգի հետ և ապացուցել, որ մեր դարը ավելի վատ է Օնեգինի դարից: Նայեցեք այդ «պարոդիայի» թեկուզ մի քանի տողերին: Մեր ժամանակակից Լենինգրադում ամեն բան հեղինակին դուր չի գալիս: Նա շարախնդում է, զրպարտում սովետական մարդկանց, Լենինգրադին: Ուրիշ բան էր Օնեգինի դարը՝ ոսկե դարը Խայչինի կարծիքով: Այժմ այնպես չէ. երևան է եկել բնակրածին, քարտ, անցաթուղթ, աղջիկները, այն ոչ երկրային, եթերային արարածները, որոնցով առաջ զմայլվում էր Օնեգինը, այժմ դարձել են փողոցային շարժումը կարգավորողներ. նորոգում են Լենինգրադի տները և այլն և այլն: Թույլ տվեք մեկ քաղվածք բերել այդ «պարոդիայից»:

Տրամվայ է նստում մեր Իվգենին:

Ո՛ր, խեղճ, սիրելի մարդ:

Զգիտեր այդպիսի տեղափոխումներ

Նրա չուսավորված դարը:

Բախտը ժպտաց Իվգենուն,

Նրա միայն ոտքը սեղմեցին.

Իվ միայն մեկ անգամ հրեցին փորին.

Նրան ասացին՝ «ապուշ»:

Նա վերհիշելով հին կարգերը,

Որոշեց մենամարտով վերջացնել վեճը.

Զեռքը տարավ գրպանը... Բայց ինչ որ մեկը

Արդեն վաղուց թուցրել էր նրա ձեռնոցները

Դրանք շունենալու պատճառով.

Լոեց Օնեգինը և հանգստացավ:

Ահա թե ինչպես է եղել լենինգրադը և ինչ է դարձել այն հիմա. վատ, ոչ կուլտուրական, կոպիտ և այնպես անդուրեկան տեսքով է նա ներկայացել խեղճ, սիրելի Օնեգինին: Ահա թե լենինգրադը և լենինգրադցիներին ինչպես է ներկայացրել գոեհկարար Խայդինը:

Վատ, արատավոր, նեխած դիտավորություն ունի այդ զրպարտիչ պարողիան:

Իսկ ինչպե՞ս կարող էր «լենինգրադի» խմբագրությունը աչքաթող անել այս շարամիտ զրպարտությունը լենինգրադի և նրա հիանալի մարդկանց հասցեին: Ինչպե՞ս կարելի է խայզիսներին թույլ տալ երևան գալու լենինգրադի ամսագրերի էջերում:

Վերցրեք մի ուրիշ երկ՝ պարողիայի պարողիա Նեկրասովի մասին, կաղմված այնպես, որ դա ուղղակի վիրավորանք է մեծ պոետի ու հասարակական գործչի հիշատակին, ինչպիսին եղել է Նեկրասովը, մի վիրավորանք, որի դեմ պետք է վրդովվեր յուրաքանչյուր կրթված մարդ: Ուսկայն «լենինգրադի» խմբագրությունը այդ կեղտոտ շիլան սիրով զետեղել է իր էջերում:

Ուրիշ ի՞նչ ենք մենք գտնում «լենինգրադ» ամսագրում: Արտասահմանյան տափակ ու գոեհիկ անեկդոտ, վերցված, ըստ երևույթին, անցյալ դարի վերջի անեկդոտների հին, բանեցված ժողովածուներից: Մի՞թե «լենինգրադ» ամսագիրը ուրիշ բան չունի իր էջերը լցնելու համար: Մի՞թե գրելու ուրիշ բան չկա «լենինգրադ» ամսագրում: Վերցրեք թեկուզ այնպիսի թեմա, ինչպիսին լենինգրադի վերականգնումն է: Քաղաքում կատարվում է հոյակապ աշխատանք, քաղաքը բուժում է բլոկադայի պատճառած վերքերը: Լենինգրադցիները լի են հետպատերազմյան վերականգնման խանդավառությամբ ու պաթոսով: Լկյդ մասին որևէ բան գրված է արդյոք «լենինգրադ» ամսագրում: Լենինգրադցիները կտեսնե՞ն երբևիցե, որ իրենց աշխատանքային սխրագործությունները արտացոլվեն ամսագրի էջերում:

Վերցրեք այնուհետև սովետական կնոջ վերաբերյալ թեման: Մի՞թե նախ ինչ է սովետական ընթերցողների և ընթերցողուհիների մեջ տարածել կնոջ դերի և կոշման նկատմամբ Ախմատովային յուրահատուկ ամոթաբեր հայացքներ, իսկական ճշմարտացի պատկերացում չտալով սովետական ժամանակակից կնոջ մասին ընդհանրապես. լենինգրադցի աղջկա և հերոս կնոջ մասին մասնավորապես, որոնք իրենց ուսերի վրա կրել են պատերազմական տարիների հսկայական զժվարությունները և այժմ անձնվիրաբար աշխատում են տնտեսության վերականգնման զժվարին խնդիրների լուծման վրա:

Ինչպես երևում է, Գրողների Միության լենինգրադի բաժանմունքում գործերի դրությունը այնպես է, որ ներկայումս երկու գրական-գեղարվեստական ամսագրերի համար լավ երկեր բացահայտորեն ուղարկում են: Ահա թե ինչու Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն որոշեց փակել «լենինգրադ» ամսագիրը, որպեսզի գրական բոլոր լավագույն ուժերը կենտրոնացվեն «Զվեդդա» ամսագրում: Դա, իհարկե, չի նշանակում, որ լենինգրադը պատշաճ պայմանների առկայության դեպքում չի ունենա երկրորդ կամ նույնիսկ երրորդ ամսագիր: Հարցը լուծվում է բարձրորակ, լավ երկերի քանակով: Եվ եթե դրանք բավականաչափ շատ երևան և նրանց համար տեղ չլինի մեկ ամսագրում, կարելի կլինի ստեղծել երկրորդ և երրորդ ամսագիր, միայն

թե մեր լենինգրադի գրողները տան դադափարական և գեղարվեստական տեսանկյանից լավ արտադրանք:

Սրանք են այն կոպիտ սխալներն ու թերությունները, որ Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումը բացահայտելու նշել է «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի աշխատանքի վերաբերյալ:

Ո՞րն է այդ սխալների և թերությունների արձատր:

Այդ սխալների և թերությունների արձատր այն է, որ հիշյալ ամսագրերի խմբագիրները, մեր սովետական գրականության գործիչները, ինչպես նաև մեր գաղափարական ֆրոնտի լենինգրադի ղեկավարները մոռացել են գրականության վերաբերյալ լենինիզմի մի քանի հիմնական դրույթները: Գրողներից և նրանցից շատերը, որոնք աշխատում են որպես պատասխանատու խմբագիրներ կամ թե կարևոր պոստեր են գրավում Գրողների Միության մեջ, կարծում են, թե քաղաքականությունը կառավարության գործն է, Կենտկոմի գործը: Ինչ վերաբերում է գրողներին, ապա նրանց գործը չի քաղաքականությամբ զբաղվելու: Մարդը գրել է լավ, գեղարվեստորեն, գեղեցիկ. պետք է, ընթացք տալ, շնայած այն բանին, որ նրա մեջ կան փտած տեղեր, որոնք ապակողմնորոշում են մեր երիտասարդությանը, թունավորում են նրան: Սենք պահանջում ենք, որ մեր ընկերները, ինչպես գրականության ղեկավարները, այնպես էլ գրողները, ղեկավարվեն նրանով, առանց որի սովետական հասարակակարգը չի կարող ապրել, այսինքն քաղաքականությամբ, որպեսզի մենք երիտասարդությանը դաստիարակենք ոչ թե ամեն բանի վրա թրելու և դադափարադրկության ոգով, այլ կայտառության և ռևոլուցիոնության ոգով:

Հայտնի է, որ լենինիզմը իր մեջ մարմնավորել է 19-րդ դարի ռուսական ռևոլուցիոն-դեմոկրատների բոլոր լավագույն տրադիցիաները և որ մեր սովետական կուլտուրան առաջացել, զարգացել ու ծաղկման է հասել անցյալի կուլտուրական ժառանգության քննադատական վերամշակման հիման վրա: Գրականության ասպարեզում մեր պարտիան լենինի և Ստալինի շուրթերով բազմիցս ընդունել է ռուս մեծ ռևոլուցիոն-դեմոկրատ գրողներ ու քննադատներ Բելինսկու, Դոբրոլյուբովի, Զերնիշևսկու, Սալտիկով-Շչեդրինի, Պլեխանովի հսկայական նշանակությունը: Սկսած Բելինսկուց ռուսական ռևոլուցիոն-դեմոկրատ ինտելիգենցիայի բոլոր լավագույն ներկայացուցիչները չէին ընդունում այսպես կոչված «մարուր արվեստը», «արվեստը արվեստի համար» և եղել են արվեստը ժողովրդի համար, նրա բարձր գաղափարականության ու հասարակական նշանակության մունեթիկները: Արվեստը չի կաշույ իրեն անջատել ժողովրդի բախտից: Հիշեցեք Բելինսկու նշանավոր «Նամակը Դոգուլին», որի մեջ մեծ քննադատը իրեն յուրահատուկ ամբողջ կրթությունամբ խարազանում էր Դոգուլին՝ ժողովրդի գործին դավաճանելու և ցարի կողմը անցնելու նրա փորձի համար: Այդ նամակը լենինը անվանել է գրաքննության չենթարկված դեմոկրատական մամուլի լավագույն ևրկերից մեկը, որը գրական հսկայական նշանակություն է պահպանել մինչև այժմ:

Հիշեցեք Դոբրոլյուբովի գրական-հրապարակախոսական հոդվածները, որոնց մեջ այնպիսի ուժով ցույց է տրված գրականության հասարակական արժեքը: Մեր ամբողջ ռուսական ռևոլուցիոն-դեմոկրատական հրապարակախոսությունը հագեցված է մահացու ատելությանմբ դեպի ցարական հասարակակարգը և տոգորված է ժողովրդի արձատրական շահերի, նրա լուսավորության,

նրա կուլտուրայի, ցարական ռեժիմի կապանքներից նրա աղատագրության համար պայքարելու վե՛հ ձգտումով: Մարտական արվեստ, որը պայքար է մղում ժողովրդի լավագույն իղբալիների համար, այսպես էին պատկերացնում գրականությունն ու արվեստը ուս գրականության լավագույն ներկայացուցիչները: Չերնիշևսկին, որը բոլոր ուտոպիկ-սոցիալիստներից ամենից ավելի մոտեցավ գիտական սոցիալիզմին և որի երկերից, ինչպես նշում է Լենինը, «դասակարգային պայքարի շունչ էր բուրում», սովորեցնում էր, որ արվեստի խնդիրն է, բացի կյանքի ճանաչումից, մարդկանց սովորեցնել ճիշտ գնահատել հասարակական կյանքի այս կամ այն երևույթները: Նրա մերձավորագույն բարեկամ և գինակից Դոբրոլյուբովը նշում էր, թե :Ոչ թե կյանքն է ընթանում գրական նորմաներով, այլ գրականությունն է կիրառվում համաձայն կյանքի ուղղության», և ուժգին թափով քարոզում էր սեփական ու ժողովրդայնության սկզբունքները գրականության մեջ, գտնելով, որ արվեստի հիմքը հանդիսանում է իրականությունը, որ նա հանդիսանում է ստեղծագործության աղբյուր և որ արվեստը ակտիվ դեր ունի հասարակական կյանքում, ձևավորելով հասարակական գիտակցությունը: Ըստ Դոբրոլյուբովի, գրականությունը պետք է ծառայի հասարակությանը, պետք է ժողովրդին պատասխաններ տա արդիականության ամենասուր հարցերին, պետք է գտնվի իր դարաշրջանի գաղափարների մակարդակի վրա:

Մարքսիստական գրական քննադատությունը, որը հանդիսանում է Բենիկսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի մեծ տրադիցիաների շարունակողը, միշտ էլ եղել է ռեալիստական, հասարակական-նպատակասլաց արվեստի համար մարտնչող: Պլեխանովը շատ է աշխատել, որպեսզի մերկացնի իդեալիստական, հակագիտական պատկերացումը գրականության և արվեստի մասին, սլաշտպանի մեր մեծ ուս ունուցի՞ռն-դեմոկրատների հիմնական գրույթները, որոնք սովորեցնում էին գրականության մեջ տեսնել ժողովրդին ծառայելու հզոր միջոցը:

Վ. Ի. Լենինը առաջինը ամենայն հստակությամբ ձևակերպեց հասարակական առաջավոր մտքի վերաբերմունքը գրականությանը և արվեստին, և ես կհիշեցնեմ ձեզ Լենինի «Պարտիական կազմակերպությունը և պարտիական գրականությունը» հայտնի հոդվածը, գրված 1905 թվի վերջին, որի մեջ նա իրեն յուրահատուկ ուժով ցույց է տվել, որ գրականությունը չի կարող լինել անպարտիական, որ նա պետք է լինի պրոլետարական ընդհանուր դործի կարևոր բաղկացուցիչ մասը: Լենինի այդ հոդվածում կան այն բոլոր հիմքերը, որոնց վրա հիմնվում էր սովետական գրականության զարգացումը: Լենինը գրել է.

«Գրականությունը պետք է դառնա պարտիական: Ի հակադրություն բուրժուական բարքերի, ի հակադրություն բուրժուական ձեռնարկատիրական, շարժիական մամուլի, ի հակադրություն բուրժուական գրական կարիերիզմի և անհատապաշտության, «աղայական անարխիզմի» և շահույթի հետևից բնականուրեք, — սոցիալիստական պրոլետարիատը պետք է առաջադրի պարտիական գրականության սկզբունքը, զարգացնի այդ սկզբունքը և այն կենսագործի ըստ հնարավորին առավել լիակատար և ամբողջական ձևով»:

Ո՞րն է պարտիական գրականության այդ սկզբունքը: Ո՞չ միայն այն, որ սոցիալիստական պրոլետարիատի համար գրական գործը չի շարույ մարդկանց և խմբերի հարստանալու միջոց լինել, նա չի կարող ընդհանրա-

պես անհատական գործ լինելու անկախ պրոլետարական ընդհանուր գործից։ Կորչելն անպարտիական գրականագետները, կորչելն գերմարգդրականագետները։ Գրական գործը պետք է դառնա ընդհանուր պրոլետարական գործի մի մասը...»։

Եվ այնուհետև այդ նույն հոդվածում ասված է.

«Այսին հասարակության մեջ և հասարակությունից ազատ լինել՝ չի կարելի։ Բուրժուական դրողի, նկարչի, գերասանուհու ազատությունը սոսիալաբոլորով (կամ կեղծ կերպով դիմակավորված) կախումն է դրամական պարկից, կաշառումից, ապրուստամիջոցից»։

Հենիսիզմը ելնում է այն բանից, որ մեր գրականությունը չի կարող լինել ապոլիտիկ, չի կարող իրենից ներկայացնել «արվեստ արվեստի համար», այլ կոչված է առաջավոր կարևոր դեր կատարել հասարակական կյանքում։ Այստեղից բխում է պարտիական գրականության լենինյան սկզբունքը՝ Վ. Ի. Լենինի կարևորագույն ավանդը գրականագիտության մեջ։

Հետևաբար, սովետական գրականության լավագույն տրադիցիան հանդիսանում է 19-րդ դարի ռուսական գրականության լավագույն տրադիցիաների, մեր մեծ ռեվոլյուցիոն-դեմոկրատներ Բելինսկու, Դոբրոլյուբովի, Զերնիշևսկու, Սալտիկով-Շչեդրինի ստեղծած, Պլեխանովի կողմից շարունակված և Հենիսիս Ստալինի կողմից գիտականորեն մշակված ու հիմնավորված տրադիցիաների շարունակությունը։

Ներկայումս իր պոեզիան անվանում էր «վրիժառության և տիրության մուսա»։ Զերնիշևսկին և Դոբրոլյուբովը գրականությունը համարում էին որպես սուրբ ծառայություն ժողովրդին։ Ռուսաստանյան դեմոկրատական ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները ցարական կարգի պայմաններում զոհվում էին այդ վեհ, բարձր գաղափարների համար, զնում էին տաժանակրության, աքսորի։ Ինչպե՞ս կարելի է մոռանալ այդ պանծալի տրադիցիաները, Ինչպե՞ս կարելի է արհամարհել դրանք, ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որ Ախմատովաները և Զոլոտենկոները անցկացնեն «արվեստ արվեստի համար» ռեակցիոն լոգոնգր, որ գաղափարազրկության դիմակի տակ քողարկվելով հրամցնեն սովետական ժողովրդին խորթ գաղափարներ...

Լենինիզմը մեր գրականությանը հատկացնում է հսկայական հասարակական-վերափոխի նշանակություն։ Եթե մեր սովետական գրականությունը թույլ տար իր այդ հսկայական դաստիարակչական դերի իջեցում, դա կնշանակեր զարգացում դեպի ետ, վերադարձ դեպի «թափաք դար»։

Հնկեր Ստալինը մեր գրողներին անվանել է մարդկային հոգու ճարտարապետներ։ Այս բնորոշումը խոր իմաստ ունի։ Իսկ այն է առում, որ մարդկանց դաստիարակելու համար, սովետական երիտասարդությանը դաստիարակելու համար, գրական աշխատանքում խոտան թույլ չտալու համար՝ սովետական գրողները վիթխարի պատասխանատվություն ունեն։

Ոմանց տարօրինակ է թվում, թե ինչու Կենտկոմը այսպիսի կտրուկ միջոցներ է ձեռք առել գրական հարցի վերաբերյալ։ Մեզ մոտ չեն վարժվել դրան։ Կարծում են, որ եթե խոտան է թույլ տրված արտադրության մեջ, կամ թե չի կատարված լայն սպառման առարկաների արտադրական ծրագրերը, կամ թե չի կատարված անտառանյութի մթերման պլանը, ապա դրա համար հանդիմանություն հայտարարելը բնական գործ է (հավանության ծիծաղ դահլիճում)։ Իսկ եթե խոտան է թույլ տրված մարդկային հոգու դաս-

տիարակման տեսակետից, եթե խոստան է թույլ տրված երիտասարդությունը դաստիարակելու գործում, ապա այստեղ կարելի է և հանդուրժել: Մինչդեռ մի՞թե դա ավելի մեծ մեղք չէ, քան արտադրական ծրագիրը չկատարելը, կամ թե արտադրական առաջադրանքը տապալելը: Կենտկոմը իր որոշմամբ նկատի ունի գաղափարական ճակատը առաջ մղել, հավասարեցնելով մեր աշխատանքի բոլոր մյուս բնագավառներին:

Վերջին ժամանակներս գաղափարախոսական ճակատում երևան են եկել մեծ ճեղքվածքներ ու թերություններ: Բավական է ձեռնհասել մեր կինոարվեստի ետ մնալը, մեր թատերական-դրամատիկ ունակությունները ցածրորակ երկերով խճողվելը, չխոսելով այն մասին, ինչ որ տեղի է ունեցել «Լենին-գրադ» և «Ջվեզդա» ամսագրերում: Կենտկոմը հարկադրված էր միջամտել և վճռականորեն ուղղել գործը: Նա իրավունք չուներ մեղմացնելու իր հարվածը նրանց դեմ, ովքեր մոռանում են իրենց պարտականությունները ժողովրդի նկատմամբ, երիտասարդության դաստիարակության նկատմամբ: Եթե մենք ուզում ենք մեր ակտիվի ուղադրությունը դարձնել գաղափարախոսական աշխատանքի հարցերին և կարգ հաստատել այդտեղ, պարզորոշ ուղղություն տալ աշխատանքին, պետք է սուր կերպով, ինչպես վայել է սովետական մարդկանց, ինչպես վայել է բոլշևիկներին, քննադատենք գաղափարախոսական աշխատանքի սխալներն ու թերությունները: Միայն այն ժամանակ մենք կկարողանանք ուղղել գործը:

Գրականագետներից ոմանք դատում են այսպես. քանի որ պատերազմի ժամանակ ժողովուրդը գրականության ծառավ էր զգում, քիչ գրքեր էին լույս տեսնում, ապա ընթերցողը կկլանի ամեն մի ապրանք, թեկուզ այն մի քիչ էլ փտած լինի: Մինչդեռ այդ բոլորովին այդպես չէ, և մենք չենք կարող հանդուրժել ամեն տեսակ գրականություն, որը մեզ կհրամցեն անխտապահանջ գրականագետները, խմբագիրները, հրատարակիչները: Սովետական ժողովուրդը սովետական գրողներից սպասում է իսկական գաղափարական գինվածություն, հոգևոր սնունդ, որը օգներ մեծ շինարարության պլանների կատարմանը, մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման պլանների կատարմանը: Սովետական ժողովուրդը մեծ պահանջներ է ներկայացնում գրականագետներին, ուզում է իր գաղափարական և կուլտուրական պահանջմունքների բավարարում: Պատերազմի ժամանակ իրադրության բերումով մենք չէինք կարող ապահովել այդ կենսական պահանջները: Ժողովուրդն ուզում է իմաստավորել տեղի ունեցող իրադարձությունները: Նրա գաղափարական և կուլտուրական մակարդակը աճել է: Նա հաճախ չի բավարարվում գրականության և արվեստի այն երկերի որակով, որոնք մեզ մոտ լույս են ընծայվում: Իկյո բանը չեն հասկացել և չեն ուզում հասկանալ գրականության որոշ աշխատողներ, գաղափարախոսական ճակատի աշխատողներ:

Մեր ժողովրդի պահանջների և ճաշակի մակարդակը շատ է բարձրացել և նա, ու չի ուզում կամ ընդունակ չէ բարձրանալ այդ մակարդակին. ետ կմղվի: Գրականությունը կոչված է ոչ միայն ընթանալու ժողովրդի պահանջների մակարդակին համահավասար, այլ ավելին՝ նա պարտավոր է զարգացնել ժողովրդի ճաշակը, ավելի բարձրացնել նրա պահանջները, նրան հարստացնել նոր գաղափարներով, առաջ տանել ժողովրդին: Նա, ով ընդունակ չի համաքայլ ընթանալ ժողովրդի հետ, բավարարել նրա աճած պահանջները:

հանջները, գտնվել սովետական կուլտուրայի զարգացման խնդիրների մակարդակին, անպայման շարքից դուրս կմնա:

«Զվլեգդայի» և «Լենինդրադի» ղեկավար աշխատողների մոտ գաղափարականության պակասից բխում է նաև երկրորդ խոշոր սխալը: Եւ այն է, որ մեր որոշ ղեկավար աշխատողներ գրականագետների հետ իրենց հարաբերությունների անկյունքարը դարձրել են ոչ թե սովետական մարդկանց քաղաքական պատիարակության և գրականագետներին քաղաքական ուղղություն տալու շահերը, այլ անձնական, բարեկամական շահերը: Ասում են, որ պաղափարական տեսակետից վնասակար և ղեղարվեցատական տեսակետից թույլ շատ երկեր տպագրվում են այն բանի պատճառով, որ չեն ցանկանում վիրավորանք պատճառել այս կամ այն գրողին: Նման աշխատողների տեսակետով, ավելի լավ է վնաս հասցնել ժողովրդի շահերին, պետության շահերին, միայն թե չվիրավորել որևէ մեկին: Սա միանգամայն անճիշտ և քաղաքականապես սխալ դրույթ է: Այդ միևնույն է, թե միլիոնը փոխարինել գրողով:

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն իր որոշման մեջ նշում է գրականության մեջ սկզբունքային հարաբերությունները բարեկամական հարաբերություններով նենգափոխելու մեծագույն վնասը: Մեր որոշ գրականագետների միջավայրում եղած անսկզբունք բարեկամական հարաբերությունները խորապես քաջասական դեր են խաղացել, իջեցրել են գրական շատ երկերի գաղափարական մակարդակը, հեշտացրել սովետական գրականությանը խորժմարդկանց մուտքը գրականության մեջ: Քննադատության քաջակայությունը գաղափարախոսական ճակատի Լենինդրադի ղեկավարների կողմից, Լենինդրադի ամսագրերի ղեկավարների կողմից, սկզբունքային հարաբերությունները ժողովրդի շահերի հաշվին բարեկամական հարաբերություններով նենգափոխելը մեծագույն վնաս բերեցին:

Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ եթե մենք ուզում ենք պահպանել կադրերը, սովորեցնել և դաստիարակել նրանց, մենք չպիտք է վախենանք որևէ մեկին վիրավորելուց, չպիտք է վախենանք սկզբունքային, համարձակ, անկեղծ և օրեկտիվ քննադատությունից: Առանց քննադատության՝ ամեն մի կազմակերպություն, այդ թվում նաև գրականը, կարող է նեխել: Առանց քննադատության՝ ամեն մի հիմնադրություն կարելի է խորացնել և դրա դեմ ավելի դժվար կլինի պայքարել: Միայն համարձակ և քաջահայտ քննադատությունը օգնում է մեր մարդկանց կատարելագործվելու, նրանց դրդում է դեպի առաջ գնալու, հաղթահարելու իրենց աշխատանքի թերությունները: Այնտեղ, որտեղ չկա քննադատություն, այնտեղ արժատակալում է նեխածությունը և լճացումը, այնտեղ տեղ չկա առաջընթաց շարժման համար:

Ընկեր Ստալինը բազմիցս նշում է այն, որ մեր զարգացման կարևորագույն պայմանը այն անհրաժեշտությունն է, որպեսզի յուրաքանչյուր սովետական մարդ ամեն օր ամփոփի իր աշխատանքի արդյունքները, աներկյուղ ստույգի իրեն, վերլուծի իր աշխատանքը, արիարար քննադատի իր թերություններն ու սխալները, մտածի, թե ինչպես ավելի լավ արդյունքների հասնի իր աշխատանքում և անրնդհատ աշխատի իր կատարելագործման վրա: Սա վերաբերում է գրականագետներին նույն չափով, ինչ չափով և մյուս բոլոր աշխատողներին: Նա, ով վախենում է իր աշխատանքի քննադա-

տությունից, նաև անարդ վախկոտ է, անարժան իր ժողովրդի հարգանքին (Բուռն ծափահարություն)։

Ոչ-քննադատական վերաբերմունքը դեպի իրենց աշխատանքը, գրականագետների նկատմամբ սկզբունքային հարաբերությունները բարեկամական հարաբերություններով նկնդափոխելը լայնորեն տարածված է նաև Սովետական Գրողների Միության Վարչությունում, Միության Վարչությունը և մասնավորապես նրա նախագահ ընկ. Տիխոնովը մեղավոր են այն անբարեհաջող դրության համար, որ բացահայտված է «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերում, մեղավոր են, որ նրանք ոչ միայն արգելք չեն հարուցել Զոշչենկոյի, Ախմատովայի և մյուս ոչ-սովետական գրողների վնասակար ազդեցությունների ներթափանցմանը սովետական գրականության մեջ, այլև թույլ են տվել սովետական պրականությանը խորթ տենդենցների և բարբերի ներթափանցումը մեր ամսագրերում։

Լենինգրադի ամսագրերի թերությունների մեջ իր դերն է խաղաղել նաև անպատասխանատվության այն սխտեմը, որը առաջացել է ամսագրերի ղեկավարության մեջ՝ Լենինգրադի ամսագրերի խմբագրություններում գոյություն ունեցող այն դրության ժամանակ, երբ անհայտ է, թե ո՞վ է ամբողջովին պատասխանատու ամսագրի և նրա բաժինների համար, երբ բազմալուծ էր տարրական կարգն ու կանոնը։ Այդ թերությունը անհրաժեշտ է ուղղել։ Ահա թե ինչու Կենտրոնական Կոմիտեն իր որոշմամբ նշանակեց «Զվեզդա» ամսագրի պլեսավոր խմբագիր, որը պետք է պատասխանատու լինի ամսագրի ուղղության համար, ամսագրում զետեղվող երկերի գաղափարական և վեղարվեստական բարձր որակի համար։

Ամսագրերում, ինչպես և ամեն մի գործի մեջ անհանդուրժելի են անկարգությունը և անարխիան։ Անհրաժեշտ է որոշակի պատասխանատվություն ամսագրի ուղղության և հրապարակվող նյութերի բովանդակության համար։

Դուք պետք է վերականգնեք Լենինգրադի գրականության և Լենինգրադի գաղափարախոսական ճակատի պանծալի տրադիցիաները։ Դառն է ու վիրավորական, որ Լենինգրադի ամսագրերը, որոնք միշտ էլ եղել են առաջադիր գաղափարների, առաջավոր կուլտուրայի օջախներ, դարձել են գաղափարազրկության և գոեհկության ապաստարան։ Պետք է վերականգնել Լենինգրադի պատիվը, որպես գաղափարախոսական և կուլտուրական առաջավոր կենտրոնի։ Պետք է հիշել, որ Լենինգրադը եղել է լենինյան-բոլշևիկյան կազմակերպությունների օրրանը։ Այստեղ Լենինը և Ստալինը գրել են բոլշևիկյան պարտիայի հիմքերը, բոլշևիկյան աշխարհայեցողության, բոլշևիկյան կուլտուրայի հիմքերը։

Լենինգրադի գրողների, Լենինգրադի պարտիական ակտիվի պատվի գործն է՝ վերականգնել և է՛լ ավելի զարգացնել Լենինգրադի այդ պանծալի տրադիցիաները։ Գաղափարախոսական ճակատի Լենինգրադի աշխատողների և առաջին հերթին գրողների խնդիրն է՝ Լենինգրադի գրականությունից վտարել գաղափարազրկությունը և գոեհկությունը, որպեսզի բարձր պահեն սովետական առաջավոր գրականության գրոշը, որպեսզի ոչ մի հնարավորություն չբաց չթողնեն իրենց գաղափարական և գեղարվեստական աճման համար, ետ չմնան ժամանակակից թեմատիկայից, ետ չմնան ժողովրդի պահանջներից, ամեն կերպ զարգացնեն իրենց թերությունների համարձակ քննա-

դատությունը, ոչ թե քծնողական, ոչ թե խմբային ու խնամիական քննադատությունը, այլ իսկական համարձակ ու անկախ գաղափարական-բոլշևիկյան քննադատությունը:

Ընկերներ, ալժմ ձեզ համար պետք է պարզ լինի, թե ի՞նչպիսի կոպիտ վրիպում է թույլ տվել պարտիայի Լենինգրադի Քաղաքային Կոմիտեն, հատկապես նրա պրոպագանդայի և ագիտացիայի բաժինը և պրոպագանդայի գծով քարտուղար ընկ. Շիրոկովը, որը դրված էր գաղափարական աշխատանքի զուտ և որի վրա առաջին հերթին ընկնում է ամսագրերի ձախողման պատասխանատվությունը: Պարտիայի Լենինգրադի կոմիտեն թույլ է տվել քաղաքական կոպիտ սխալ, հունիս ամսվա վերջում որոշում կայացնելով «Զվեզդա» ամսագրի խմբագրության նոր կազմի մասին, որի մեջ մտցվել էր նաև Զոչչենկոն: Միայն քաղաքական կուրությամբ կարելի է բացատրել, որ պարտիայի քաղկոմի քարտուղար ընկ. Կապուստինը և քաղկոմի պրոպագանդայի գծով քարտուղար ընկ. Շիրոկովը կայացրել են այդպիսի սխալ որոշում: Կրկնում եմ, որ այդ բոլոր սխալները պետք է որքան կարելի է շուտ և լճառանդորեն ուղղել, որպեսզի վերականգնվի Լենինգրադի «նոռ» մեր երկրի գաղափարական կյանքում:

Մենք բոլորս սիրում ենք Լենինգրադը: Մենք բոլորս սիրում ենք մեր Լենինգրադի պարտիական կազմակերպությունը, որպես մեր պարտիայի առաջավոր ջոկատներից մեկը: Լենինգրադը չպետք է ապաստարան դառնա գանգան խցկվել, գրական ստահակների համար, որոնք ուզում են Լենինգրադն օգտագործել իրենց նպատակներին: Զոչչենկոյի, Ախմատովայի և դրանց նմանների համար սովետական Լենինգրադը թանկ չէ: Նրանք ուզում են այնտեղ տեսնել այլ հասարակական-քաղաքական կարգերի և այլ գաղափարախոսության մարմնավորում: Զին Պետերբուրգը, Պենն Հեծյալը, որպես այդ հին Պետերբուրգի կերպարը, ահա թե ինչ է առկայծում նրանց աչքերի առաջ: Իսկ մենք սիրում ենք սովետական Լենինգրադը, Լենինգրադը որպես սովետական կուլտուրայի առաջավոր կենտրոնը: Լենինգրադից դուրս եկած ուղուցիոն և դեմոկրատ մեծ գործիչների պանծալի կոհորտան՝ մեր անմիջական նախահայրերն են, որոնցից մենք ծնունդ ենք առել: Ժամանակակից Լենինգրադի պանծալի տրադիցիաները այդ մեծ ուղուցիոն-դեմոկրատական տրադիցիաների զարգացման շարունակությունն են, տրադիցիաներ, որոնք մենք չենք փոխի որևէ այլ բանի հետ: Թող Լենինգրադի ակտիվը համարձակ կերպով, առանց ետ նայելու, առանց «վարժեցման» վերլուծի իր սխալները, որպեսզի, որքան կարելի է, ավելի լավ և արագ ուղղի գործը և առաջ մղի մեր գաղափարական աշխատանքը: Լենինգրադի բոլշևիկները պետք է նրբից իրենց տեղը գրավեն սովետական գաղափարախոսության, սովետական հասարակական գիտակցության ձևավորման գործում նախաձեռնողների և առաջավորների շարքերում: (Բուռն ծափահարություններ):

Ի՞նչպես կարող էր պատահել, որ պարտիայի Լենինգրադի քաղկոմը այսպիսի դրություն թույլ տվեց գաղափարախոսական ճակատում: Այնքան է, որ նա տարվել էր քաղաքի վերականգնման, նրա արդյունարևության բարձրացման ընթացիկ գործնական աշխատանքով և մոռացել գաղափարական-դաստիարակչական աշխատանքի նշանակությունը, և այդ մոռացումը թանկ նստեց Լենինգրադի կազմակերպությանը: Զի կարելի մոռանալ գաղափարական աշխատանքը: Մեր մարդկանց հոգևոր հարստությունները պակաս

կարևոր չեն, քան նյութականը: Չի կարելի ապրել կուրորեն, հոգ չտանելով մաղվա օրվա մասին ոչ միայն նյութական արտագրության ասպարեզում, այլև գաղափարախոսական ասպարեզում: Լեւոն սովետական մարդիկ այնքան են աճել, որ չեն ուզում լսել մի հոգևոր արտադրանք, ինչպիսին էլ որ հրամայեն նրան: Կուլտուրայի և արվեստի աշխատողները, որոնք չեն վերականգնվել և չեն կարողանա բավարարել ժողովրդի աճած սլահանշները, կարող են արագորեն կորցնել ժողովրդի վստահությունը:

Ընկերներ, մեր սովետական գրականությունը ապրում է և պիտի ասորի ժողովրդի շահերով, հայրենիքի շահերով: Դրականությունը ժողովրդի հարազատ գործն է: Ահա թե ինչու ձեր աճեն մի հաջողությունը, աճեն մի նշանակալից ստեղծագործություն ժողովուրդը դիտում է որպես իր հաղթանակը, ահա թե ինչու յուրաքանչյուր հաջող գործ կարելի է համեմատել շահած ճակատամարտի հետ, կամ թե տնտեսական ճակատում տարած խոշոր հաղթանակի հետ: Ընդհակառակը, սովետական գրականության յուրաքանչյուր անհաջողություն խորապես վիրավորական և գառն է ժողովրդին, պարտիային, պետությանը: Հատկապես այդ բանը նկատի ունի Կենտկոմի որոշումը, որը հոգ է տանում ժողովրդի շահերի մասին և խիստ անհանգստացած է լենինգրադի գրողների մոտ եղած իրերի դրությամբ:

Եթե գաղափարագուրկ մարդիկ ուզում են սովետական գրականության աշխատողների լենինգրադի ջոկատին գրել նրա հիմքից, ուզում են խախտել նրանց աշխատանքի գաղափարական կողմը, լենինգրադի գրողների ստեղծագործությունը գրել նրա հասարակական վերափոխիչ նշանակությունից, ապա Կենտրոնական Կոմիտեն հույս ունի, որ լենինգրադի գրականագետները իրենց մեջ ուժ կգտնեն վերջ դնելու լենինգրադի գրական ջոկատը, նրա ամսագրերը գաղափարագրկության, անսկզբունքայնության, ապուլիտիկության հունի մեջ առնելու բոլոր փորձերին: Դուք դրված եք գաղափարախոսության ճակատի առաջավոր գծում: Դուք միջազգային նշանակություն ունեցող հսկայական խնդիրներ ունեք և դա պետք է բարձրացնի յուրաքանչյուր սովետական իսկական գրականագետի պատասխանատվության զգացումը իր ժողովրդի, պետության, պարտիայի առաջ, բարձրացնի կատարվող պարտքի կարևորության գիտակցությունը:

Բուրժուական աշխարհին դուր չեն գալիս մեր հաջողությունները ինչպես մեր երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով ամրապնդվեցին սոցիալիզմի դիրքերը: Սոցիալիզմի հարցը օրակարգում է դրված Եվրոպայի շատ երկրներում: Դա դուր չի գալիս աճեն գույնի իմպերիալիստներին, նրանք վախենում են սոցիալիզմից, վախենում են մեր սոցիալիստական երկրից, որը օրինակ է հանդիսանում ամբողջ առաջավոր մարդկության համար: Իմպերիալիստները, նրանց գաղափարական կամակատարները, նրանց գրականագետներն ու ժուռնալիստները, նրանց քաղաքագետներն ու դիվանագետները աճեն կերպ աշխատում են զրպարտել մեր երկիրը, այն ներկայացնել ոչ ճիշտ լույսի տակ, զրպարտել սոցիալիզմը: Այս պայմաններում սովետական գրականության խնդիրն է՝ ոչ միայն հարվածին պատասխանել հարվածով, բեղուն աչք ամբողջ նողկալի զրպարտության ու հարձակումներին մեր սովետական կուլտուրայի, սոցիալիզմի վրա, այլև համարձակորեն խարազանել և

հարձակում գործել հյուծախտի ու նեխման վիճակում գտնվող բուրժուական կուլտուրայի վրա:

Լերտաքին ինչ գեղեցիկ ձև էլ որ ընդունելիս լինի ժամանակակից բուրժուական արևմտա-եվրոպական և ամերիկյան մոդայական գրական-սգետներին, ինչպես նաև կինո-ոեմիսյորների և թատերական ոեմիսյորների ստեղծագործությունը, միևնույն է, նրանք չեն փրկի և չեն բարձրացնի իրենց բուրժուական կուլտուրան, որովհետև նրա բարոյական հիմքը փտած է ու նեխած, որովհետև այդ կուլտուրան ի սպաս է դրված մասնավոր-կապիտալիստական սեփականության, ի սպաս է գրված հասարակության բուրժուական վերնախավերի էգոիստական, շահամոլական շահերին: Բուրժուական գրականագետների, կինո-ոեմիսյորների, թատերական ոեմիսյորների ամբողջ բանակը աշխատում է հասարակության առաջավոր խավերի ուշադրությունը շեղել քաղաքական ու սոցիալական պայքարի սուր հարցերից, ուշադրությունը շեղել դեպի գոեհիկ գաղափարազուրկ գրականության ու արվեստի հունը, որը լեփ-լեցուն է գանգստերներով, վարյետտեի աղջիկներով, ամեն տեսակ ավանտյուրիստների և ստահակների արկածների և ամուսնական ահապատարմությունների գովերգումով:

Վայել է արդյոք մեզ, սովետական առաջավոր կուլտուրայի ներկայացուցիչներին, սովետական հայրենասերներին բուրժուական կուլտուրայի առաջ երկրպագելու գերը, կամ թե աշակերտի դերը: Իհարկե, մեր գրականությունը, որն արտացոլում է ավելի բարձր հասարակակարգ, քան որևէ բուրժուական-դեմոկրատական հասարակակարգ, արտացոլում է այն կուլտուրան, որը շատ անգամ ավելի բարձր է, քան բուրժուական կուլտուրան, — իրավունք ունի, որ ուրիշներին սովորեցնի համամարդկային նոր բարոյականություն: Ուրիշ որտե՞ղ կգտնեք դուք այնպիսի ժողովուրդ և այնպիսի երկիր, ինչպես մեզ մոտ: Որտե՞ղ դուք կգտնեք մարդկանց այնպիսի հոյակապ հատկություններ, ինչպիսիք մեր սովետական ժողովուրդը ցույց տվեց Հայրենական Մեծ պատերազմում և ինչպիսիք նա յուրաքանչյուր օր դրսևորում է դժվարին գործերում, անցնելով տնտեսության ու կուլտուրայի խաղաղ զարգացման և վերականգնման: Յուրաքանչյուր օր մեր ժողովրդին է՛լ ավելի է վեր բարձրացնում: Մեզք այսօր այն շինք, ինչ որ էինք երկ, և վաղը այն շինք լինի, ինչ որ ենք այսօր: Մենք արդեն այն ուսաները շինք, ինչպիսիքները մենք էինք մինչև 1917 թիվը, և Ռուսիան մեզ մոտ արդեն այլևս այն չէ և մեր բնավորությունն էլ այն չէ: Մենք փոխվել ենք և աճել այն մեծագույն փերափոխությունների հետ միասին, որոնք արմատապես փոխեցին մեր երկրի դեմքը:

Ցույց տալ սովետական մարդկանց այս նոր բարձր հատկությունները, ցույց տալ մեր ժողովրդին ո՛չ միայն նրա այսօրվա վիճակում, այլև տեսնել նրա վաղվա օրը, օգնել լուսարձակով լուսավորելու առաջընթաց ուղին, — այս է յուրաքանչյուր բարեխիղճ սովետական գրողի խնդիրը: Դրողը չի կարող իրադարձությունների պոչից քարշ դալ, նա պարտավոր է ընթանալ ժողովրդի առաջավոր շարքերում, ժողովրդին ցույց տալով նրա դարպաշման ուղին: Ղեկավարվելով սոցիալիստական տեալիզմի մեթոդով, բարեխիղճորեն և ուշադիր ուսումնասիրելով մեր իրականությունը, աշխատելով ավելի խոր կերպով ներթափանցել մեր զարգացման պրոցեսների էության մեջ, դրողը պետք է դաստիարակի ժողովրդին և գաղափարապես զինի նրան: Ընտրելով

սովետական մարդու լավագույն զգացմունքները և հատկությունները, նրա առաջ բացահայտելով նրա վաղվա օրը, մենք պետք է միաժամանակ մեր մարդկանց ցույց տանք, թե նրանք ինչպես պետք է լինեն, պետք է խաղաղանենք երեկվա մնացուկները, որոնք սովետական մարդկանց խանդավառում են առաջ բնթանալու։ Սովետական գրողները պետք է օգնեն ժողովրդին, պետությունը, պարտիային՝ դաստիարակելու մեր երիտասարդությունը ու նրան դարձնելու առույգ, իր ուժերին հավատացող, ոչ մի դժվարությունից չվախեցող։

Խորժուական քաղաքագետները և գրականագետները, որքան էլ ջանք թափեն իրենց ժողովուրդներից թաքցնել ճշմարտությունը սովետական հասարակակարգի և սովետական կուլտուրայի նվաճումների մասին, որքան էլ նրանք փորձեն երկաթյա վարագույր իջեցնել, որի սահմաններից այն կոզմոսարտասահման շկարողանա ներթափանցել ճշմարտությունը Սովետական Միության մասին, որքան էլ նրանք ճգնեն նվազեցնել սովետական կուլտուրայի իսկական աճումն ու թափը—այդ բոլոր փորձերը դատապարտված են ձախողման։ Մենք շատ լավ գիտենք մեր կուլտուրայի ուժն ու առավելությունը։ Բավական է հիշեցնել մեր կուլտուրական դելեգացիաների ցնցող հաջողությունները արտասահմանում, մեր ֆիզկուլտուրային շքերթը և այլն։ Մի՞թե մենք է, որ պետք է ստորաքարշություն անենք ամեն բանի առաջ, ինչ արտասահմանյան է, կամ թե պասսիվ պաշտպանողական դիրք գրավենք։

Եթե ֆեոդալական իրավակարգը, իսկ այնուհետև բուրժուազիան իրենց ծաղկման ժամանակաշրջանում կարող էին ստեղծել նոր հասարակակարգի լինելիությունը հաստատող և նրա ծաղկումը գովերգող արվեստ, գրականություն, տպագրություն, սոցիալիստական հասարակակարգին, որ իրենից ներկայացնում է մարմնավորումը այն ամենի, ինչ որ լավագույն է մարդկային քաղաքակրթության և կուլտուրայի պատմության մեջ,—առավել ևս հնարավոր է ստեղծել աշխարհի ամենաառաջավոր գրականություն, որը շատ ևս կթողնի հին ժամանակների ստեղծագործության ամենալավագույն նմուշները։

Ընկերներ, ի՞նչ է պահանջում և ցանկանում կենտրոնական կոմիտեն։ Պարտիայի կենտրոնական կոմիտեն ցանկանում է, որ լենինգրադի ակտիվը և լենինգրադի գրողները լավ հասկանան, որ հասել է ժամանակը, երբ անհրաժեշտ է բարձր մակարդակի վրա դնել մեր գաղափարական աշխատանքը։ Սովետական երիտասարդ սերնդին վիճակված է ամրապնդելու սովետական սոցիալիստական հասարակակարգի ուժն ու հղորկությունը, սովետական հասարակության շարժիչ ուժերը լիովին օգտագործելու մեր բարեկեցության ու կուլտուրայի նոր աննախընթաց ծաղկման համար։ Այդ մեծ խնդիրների համար երիտասարդ սերունդը պետք է դաստիարակվի կայուն, առույգ, խոշորագույններից չվախեցող, այդ խոշորագույններին բնդառաջ գնաող և դրանք հաղթահարելու բնդունակ։ Մեր մարդիկ պետք է լինեն կրթված, բարձր գաղափարական մարդիկ, կուլտուրական, բարոյական բարձր պահանջներով և ճաշակով։ Այդ բանի համար մեզ անհրաժեշտ է, որ մեր դրականությունը, մեր ամսագրերը մի կողմ բաշված չլինեն արդիականություն խնդիրներից, այլ պարտիային և ժողովրդին օգնեն երիտասարդ սերնդին

դաստիարակելու սովետական հասարակակարգի նկատմամբ անհուն նվիրվածության ոգով, ժողովրդի շահերին անձնվիրաբար ծառայելու ոգով:

Սովետական գրողները և մեր բոլոր գաղափարախոսական աշխատողները այժմ կանգնած են կրակի առաջավոր գծում, որովհետև խաղաղ զարգացման պայմաններում չեն վերանում, այլ, ընդհակառակը, տո՛ւմ են դադափարախոսական ճակատի խնդիրները և առաջին հերթին գրականության խնդիրները: Ժողովուրդը, պետությունը, պարտիան ուղում են, որ գրա՜յանությունը ո՛չ թե հեռանա արդիականությունից, և այլ որ գրականությունը ակտիվորեն ներխուժի սովետական կեցության բոլոր կողմերի մեջ: Բոլշևիկները բարձր են գնահատում գրականությունը, պարզորոշ տեսնում են նրա պատմական մեծ միսիան ու դերը ժողովրդի բարոյական և քաղաքական միասնության ամրապնդման գործում, ժողովրդի համախմբման և դաստիարակման գործում: Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ցանկանում է, որ մեզ մոտ լինի հոգևոր կուլտուրայի առատություն, որովհետև կուլտուրայի առ հստակության մեջ նա տեսնում է սոցիալիզմի գլխավոր խնդիրներից մեկը:

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն հավատացած է, որ սովետական գրականության բարոյապես և քաղաքականապես առողջ Հենինգրադի ջո՛ւլատը արագ կուղղի իր սխալները և իր պատշաճ տեղը կգրավի սովետական գրականության շարքերում:

Կենտկոմը համոզված է, որ Հենինգրադի գրողների աշխատանքում նշած թերությունները կհաղթահարվեն և որ Հենինգրադի պարտիական կադա՛սկերպության գաղափարական աշխատանքը ամենակարճ ժամկետում կբարձրացվի այնպիսի մակարդակի վրա, ինչպիսին այժմ անհրաժեշտ է հոգուտ պարտիայի, ժողովրդի, պետության շահերի: (Բուռն ծափահարություններ, Բոլորը ոտքի են կանգնում):